ԲԿ ՄԿԿ «ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2024թ.մարտի 1-ի № 245 որոշմամբ
(լրացումներով և փոփոխություններով առ 01.11.2024թ.,
լրացումներով առ 05.06.2026թ.)

ՌԵԿՏՈՐ Է.Մ.ՍԱՆԴՈՅԱՆ

«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երևան – 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....3
2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ 3
3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ.....5
4. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ.....7
5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 9

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Ռուս-Հայկական համալսարան» Բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) ուսանողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով, ինչպես նաև անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողներին Հայաստանի Հանրապետության կամ Համալսարանի կողմից ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման կարգը, պայմանները և ընթացակարգը:

1.2 Սույն կանոնակարգի իրավական հիմք են հանդիսանում՝

1.2.1 ՀՀ «Կրթության մասին» 1999թ. ապրիլի 14-ի թիվ ՀՕ-297 օրենքը,

1.2.2 ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004թ. դեկտեմբերի 14-ի թիվ ՀՕ- 62-Ն օրենքը,

1.2.3 ՀՀ Կառավարության 2006թ. հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշման՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 8-ի № 1986-ն և 2005 թվականի սեպտեմբերի 15-ի № 2114-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքը,

1.2.4 «Ռուս-Հայկական համալսարան» Բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության կանոնադրությունը:

1.3 Ուսման վարձի փոխհատուցման հավակնում են այն ուսանողները, ովքեր դիմումի ներկայացման պահին չունեն ակադեմիական պարտք և համապատասխանում են նշված պայմաններին:

2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

2.1 Պետությունը նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրամադրում է (համաձայն ՀՀ Կառավարության 2006թ. հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշման) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին համապատասխան՝

2.1.1 մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով, ընդ որում.

2.1.1.1. առաջին կուրսում նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրամադրվում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվարձ) տեղերում ընդունված ուսանողներին,

2.1.1.2. հաջորդ կուրսերում նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով: Սույն պարբերության պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած սովորողների վրա՝ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում,

2.1.1.3. ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում՝ երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին: Թափուր տեղեր առաջանալու դեպքում նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կարող է տրամադրվել տվյալ մասնագիտության շրջանակում այլ կրթական ծրագրերի ուսանողների՝ սույն պարբերությամբ սահմանված կարգով,

2.1.1.4. սույն ենթակետի 2.1.1.2 և 2.1.1.3. պարբերությունների պահանջները տարածվում են նաև վարձովի համակարգում սովորող՝ Լեռնային Ղարաբաղի և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած հայազգի ուսանողների, ինչպես նաև հայազգի այն օտարերկրյա ուսանողների նկատմամբ, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ.

2.1.2 օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

2.1.2.1 «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձանց,

2.1.2.2 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ երեխա ճանաչված անձանց, ֆունկցիոնալության ծանր և խորը, իսկ երեխաների դեպքում նաև միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձանց՝ համաձայն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

2.1.2.3 ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսնուն (կնոջը), մինչև 27 տարեկան զավակներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

2.2 Սույն կարգի 2.1.2. կետի «2.1.2.1», «2.1.2.2» և «2.1.2.3» ենթակետերում նշված կարգավիճակ ունեցող ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսի սկզբում և վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

3.1. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրվում է ինչպես Պետության կողմից, այնպես էլ Համալսարանի սեփական միջոցների հաշվին:

3.2. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրվում է ուսանողներին՝ համապատասխան ՀՀ Կառավարության 27.06.2006թ. 1183-Ն Որոշմամբ հաստատված խմբերի, առանձին խմբերի չափորոշիչների՝ կանոնակարգով հաստատված ակադեմիական առաջադիմության ապահովման դեպքում:

3.3. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրվում է հետևյալ ժամկետներով.

3.3.1. բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով կրթական աստիճանի առաջին կուրսում՝ համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա,

3.3.2. բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով կրթական աստիճանի հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա արդյունքներով միջին որակական գնահատականի (այսուհետ՝ ՄՈԳ) առավելագույն արժեքի առնվազն 60 տոկոսի շեմը հաղթահարելու դեպքում (ՄՈԳ ≥ 2.4),

3.3.3. մագիստրոսի կրթական աստիճանում՝ առաջին կուրսում նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի 60 տոկոսի տոկոսի շեմն ապահովելու դեպքում (ՄՈԳ ≥ 2.4),

3.3.4. մագիստրոսի կրթական աստիճանում՝ հաջորդ կուրսերում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 70 տոկոսի շեմն ապահովելու դեպքում (ՄՈԳ ≥ 2.8):

3.4. Սույն կարգի 3.2 կետում նշված ուսանողների խմբերի պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման չափը հաստատվում է 27.06.2006թ. 1183-Ն Որոշմամբ:

3.5. Բարձրագույն ուսումնական հաստատությունը վարձովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10%-ին՝ ուսանողների վարձավարձներից գոյացած բյուջեի առնվազն 7% -ի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում:

3.6. Ուսման վարձի մասնակի փոխհատուցում Համալսարանի սեփական միջոցների հաշվին տրվում է հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին, ովքեր չունեն ակադեմիական և ֆինանսական պարտքեր և չեն ենթարկվել կարգապահական տույժի.

3.6.1. ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004թ. դեկտեմբերի 14-ի թիվ ՀՕ- 62-Ն օրենքով հաստատված ուսանողների խմբերին,

3.6.2. Ըստ առաջադիմության՝ ՄՈԳ-ի,

3.6.3. Ուսանողին, ում ծնողներից մեկը կամ տատիկը/պապիկն առնվազն երեք տարի հանդիսանում է Համալսարանի հիմնական աշխատող՝ 50 տոկոսի չափով՝ ուսումնառության ամբողջ ընթացքում:

3.6.4. Ուսանողին, ով ուսումնառության ընթացքում հանդիսանում է Համալսարանի հիմնական աշխատակից՝ տրամադրվում է զեղչ՝ 25 տոկոսի չափով ուսումնառության ողջ ընթացքում:

3.7. «3.6.1.» ենթակետում նշված ուսանողների խմբերի ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրվում է երկրորդ կիսամյակից սկսած՝ հետևյալ չափերով.

3.7.1. սոցիալապես անապահով (ընտանիքների ապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոսի չափով (ՄՈԳ ≥ 3.5),

3.7.2. 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ 50 տոկոսի չափով (ՄՈԳ ≥ 2.7),

3.7.3. 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 50 տոկոսի չափով (ՄՈԳ ≥ 3.2),

3.7.4. մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոսի չափով (ՄՈԳ ≥ 3.0),

3.7.5. երեք և ավելի անչափահաս, կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոսի չափով (ՄՈԳ ≥ 3.0),

3.7.6. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ 30 տոկոսի չափով (ՄՈԳ ≥2.7),

3.7.7. մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ 30 տոկոսի չափով (ՄՈԳ ≥ 2.4),

3.7.8. սոցիալապես անապահով (ընտանիքների ապահովության գնահատման համակարգում հաշվառված, անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 20 տոկոսի չափով (ՄՈԳ ≥ 3.2),

3.7.9. ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, ովքեր ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերության պատճառով՝ 50 տոկոսի չափով:

3.8. «3.6.2.» ենթակետում նշված ուսանողների խմբերի ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրվում է երկրորդ կիսամյակից սկսած՝ հետևյալ չափերով.

3.8.1. Բակալավրի և անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի դեպքում՝

3.8.1.1. 3,7 ≤ ՄՈԳ$_{\text{հանր}}$ < 3,9 դեպքում տրամադրվում է զեղչ՝ 50 տոկոսի չափով,

3.8.1.2. ՄՈԳ$_{\text{հանր}}$ ≥ 3,9 դեպքում տրամադրվում է զեղչ՝ 80 տոկոսի չափով։

3.8.2. Մագիստրատուրայի դեպքում՝

3.8.2.1. 3,8 ≤ ՄՈԳ$_{\text{հանր}}$ < 3,9 դեպքում տրամադրվում է զեղչ՝ 50 տոկոսի չափով,

3.8.2.2. ՄՈԳ$_{\text{հանր}}$ ≥ 3,9 դեպքում տրամադրվում է զեղչ՝ 80 տոկոսի չափով։

3.9. Երկրորդ կիսամյակից ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրելու դեպքում հանրագումարային ՄՈԳ-ի փոխարեն հաշվի է առնվում առաջին կիսամյակի ընթացիկ ՄՈԳ-ը։

3.10. Երկու և ավելի կարգավիճակների համապատասխանող, կամ մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում՝ ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը։

3.11. Սույն կարգի 3.6.1 և 3.6.2 կետերով Ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրվում է մեկ կիսամյակով։

4. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4.1 Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում՝ ըստ բուհերի, մասնագիտությունների և կրթական ծրագրերի բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը, որը տեղափոխվում է կուրսից կուրս։

4.2 Համալսարանի բակալավրի և անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով առաջին կուրս ընդունված ուսանողներին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով։ Հաջորդ կուրսերում վերոնշյալ ուսանողների ուսանողական նպաստը տրամադրվում է սույն կանոնակարգի 2.1.1. կետով ամրագրված սկզբունքով։

4.3 Սույն կանոնակարգի 2.1.1. կետում նշված ուսանողների համար մրցույթը կազմակերպվում է մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 25-ը՝ նախորդող ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակում հանձնած քննությունների և ստուգարքների արդյունքների (ՄՈԳ-ի) հիման վրա: ՄՈԳ-ը հաշվարկվում է հարյուրերորդականի ճշտությամբ:

4.4 Ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում՝ երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:

4.5 Ըստ առաջադիմության՝ ՄՈԳ-ի, ձևավորվում է տվյալ կուրսի տվյալ մասնագիտության ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը:

4.6 Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի տրամադրվող լրիվ փոխհատուցում վերաբերյալ որոշումները կայացվում են ռոտացիոն հանձնաժողովի կողմից:

4.7 Համալսարանի ռոտացիոն հանձնաժողովի կազմում որպես անդամ ընդգրկվում են Համալսարանի ուսումնական գործընթացի կազմակերպման վարչության ղեկավարը՝ որպես հանձնաժողովի նախագահ, Համալսարանի ինստիտուտների փոխտնօրենները, իրավաբանական դեպարտամենտի ղեկավարը: Ռոտացիոն հանձնաժողովի քարտուղար է նշանակվում ուսումնական գործընթացի կազմակերպման վարչության գլխավոր մասնագետը:

4.8 Սույն կարգի 2.1.1. կետում նշված ցուցակը Համալսարանի համապատասխան ինստիտուտի տնօրենի կողմից ներկայացվում է Համալսարանի ռոտացիոն հանձնաժողովի քննարկմանը:

4.9 Ռոտացիոն հանձնաժողովը ըստ տվյալ կուրսի տվյալ մասնագիտությանը հատկացված ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման տեղերի քանակի իրականացնում է մրցույթ և կազմում է ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը: Ցուցակի հաստատման համար կազմվում է արձանագրություն, որտեղ գրանցվում են ռոտացիոն հանձնաժողովի անդամների կողմից արտահայտված կարծիքները և հնարավոր վերապահումները: Արձանագրությունը և մրցութային ցուցակը ստորագրվում են ռոտացիոն հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից:

4.10 Ռոտացիոն հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակները մեկօրյա ժամկետում տեղադրվում են Համալսարանի կայքում: Ցուցակների վերաբերյալ դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացվեն Ռոտացիոն հանձնաժողովին: Նշված ժամկետի ավարտից հետո Ռոտացիոն հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմում-բողոքները (դրանց առկայության դեպքում), հաստատում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների վերջնական ցուցակները և այն հրամանագրման նպատակով ներկայացնում է Համալսարանի ռեկտորին:

4.11ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ուսման վարձի լրիվ և մասնակի փոխհատուցում ստանալու հավակնող ուսանողը ինստիտուտ է ներկայացնում համապատասխան դիմում՝ ՌՀՀ ռեկտորի անունով՝ կցելով փոխհատուցման տրամադրման հիմքը հաստատող փաստաթղթերը՝

4.11.1. առկա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին հաջորդող չորս շաբաթների ընթացքում.

4.11.2. հեռակա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող մեկական շաբաթների ընթացքում:

4.12 Ինստիտուտին տրվում է 3 օր՝ դիմումը՝ կից փաստաթղթերով ուսումնասիրելու և ուսումնական գործընթացի կազմակերպման վարչություն դրական մակագրությամբ (ինստիտուտի տնօրենի ստորագրությամբ) ներկայացնելու կամ դիմումը մերժելու համար՝ չափանիշներին/ժամկետներին չհամապատասխանելու պատճառով (դիմողին պաշտոնական ծանուցմամբ):

4.13 Ուսումնական գործընթացի կազմակերպման վարչությունը 7 օրվա ընթացքում ուսումնասիրում է ՌՀՀ ինստիտուտներից ուղարկված դիմումները՝ ՌՀՀ ինստիտուտների տնօրենների դրական մակագրությամբ և ներկայացնում ՌՀՀ ռեկտորի հաստատմանը՝ հետագայում՝ 27.06.2006թ. 1183-Ն Որոշմամբ տրված ժամանակահատվածում ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացնելու համար:

4.14.Համալսարանի հաշվին ուսման վարձի մասնակի փոխհատուցում ստանալու հավակնող ուսանողը ինստիտուտ է ներկայացնում համապատասխան դիմում՝ ՌՀՀ ռեկտորի անունով՝ կցելով փոխհատուցման տրամադրման հիմքը հաստատող փաստաթղթերը՝

4.14.1.առկա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին հաջորդող չորս շաբաթների ընթացքում.

4.14.2.հեռակա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող մեկական շաբաթների ընթացքում:

4.15 Ինստիտուտին տրվում է 3 օր՝ դիմումը կից փաստաթղթերով ուսումնասիրելու և ուսումնական գործընթացի կազմակերպման վարչություն դրական մակագրությամբ (ինստիտուտի տնօրենի ստորագրությամբ) ներկայացնելու կամ դիմումը մերժելու համար՝ չափանիշներին/ժամկետներին չհամապատասխանելու պատճառով (դիմողին պաշտոնական ծանուցմամբ):

4.16 Ուսումնական գործընթացի կազմակերպման վարչությունը 7 օրվա ընթացքում ուսումնասիրում է ՌՀՀ ինստիտուտների կողմից ուղարկված դիմումները՝ ՌՀՀ ինստիտուտների տնօրենների դրական մակագրությամբ և պատրաստում համապատասխան հրամանների նախագծեր:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Փոխհատուցման իրավունք ստացած ուսանողը զրկվում է դրանից, եթե տվյալ կիսամյակի դասերը փաստացի սկսելու պահից՝ երկու ամսվա ընթացքում չի վարձել ուսման սահմանված արժեքի և տրամադրված փոխհատուցման գումարի տարբերությունը:

5.2. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են ՌՀՀ գիտական խորհրդի որոշման համաձայն: